# ՀՀ ԿԳՄՍՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

# 2023-2028

Հեղինակ՝ Մարգարիտ Գրիգորյան

Արարատ 2023թ.

# Բովանդակություն


1. Նախաբան…………………………………………………………………..…………………………………..……..………. 3
2. Քոլեջիառաքելությունը……………………………………..…………..………………………………………............ 4
3. Քոլեջի նպատակները………………………………………………………............……………………………………... 4
4. Ընդհանուր տեղեկություններքոլեջի մասին……………………………..…………………………………….…... 5
5. Քոլեջի հիմնարար արժեքներն ու սկզբունքները ……………………………………………………..…..…11
6. Քոլեջի գործունեության իրավիճակի վերլուծությունը (SWOT վերլուծություն)………………………………………. 13
7. Քոլեջի առկա հիմնախնդիրները, դրանց վերլուծությունը, նպատկներիսահմանումը, միջոցառումների, գործողությունների և քայլերի հաջորդականություննու ժամանակացույց……………………………………..…..… 21
8. Արարատի պետական բժշկական քոլեջի 2023-2028 թթ զարգացման ծրագրի ոլորտային միջոցառումների եվ գործողությունների ժամանակացույց.......................................................................................................................38
9. Վերահսկողության մեխանիզմները ……………..…..……………………………………………………....…...54

# ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ քոլեջ) 2023-2028թթ. ռազմավարական ծրագիրը նպատակ ունի լուծել քոլեջի ինչպես ներկայիս, այնպես էլ ապագա մի շարքխնդիրներ, որը հանդիսանալու է քոլեջի ռազմավարական պլան: Քոլեջի ռազմավարական ծրագրի հիմքում ներառվել են ՀՀ կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը, զարգացման հայեցակարգերը, ՄԿՈՒ ոլորտի զարգացումները, աշխատաշուկայի պահանջարկը, տարածաշրջանի առանձնահատկությունները: Ինչպես նաև հաշվի են առնվել՝

-քոլեջի 2017-2018, 2018-2019, 2019-2020, 2020-2021, 2021-2022 թթ. ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունները

- «ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»

- «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի» նախագիծը

- քոլեջի նախորդ տարիների գործունեությունը, ձեռքբերումները, առկահիմնախնդիրները:

# ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«Արարատի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունն է ապահովել յուրաքանչյուր ուսանողի անհատական անձնային և մասնագիտական գիտելիքներով, կարողություններովև հմտություններով:Կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում, տարաշաշրջանի կրթական, որակի ազգային շրջանակներին (ՈԱՇ), պետական կրթական չափորոշիչներին համապատասխանող,աշխատաշուկայի պահանջներըբավարարողմիջին մասնագիտական կրթությամբ,առողջապահության ոլորտի, որակյալ, մրցունակ մասնագետներ պատրաստել,ովքեր իրենց ստացած կրթությամբ կապահովեն բարեկեցիկ և արժանապատիվ ապագա:

# ՔՈԼԵՋԻ ՆՊԱՏԱԿԸ

Քոլեջի նպատակն է դառնալ իր կողմից մատուցվող ծառայությունների մրցունակություն և թափանցիկությունապահովող, բնակչության բոլոր խմբերի համար հասանելինորարարական գաղափարների փոխանցող մրցունակ անձի շարունակական զարգացում ապահովող կրթական հաստատություն, ստեղծել ուսանողակենտրոն միջավայր՝ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու քաղաքացու համակողմանի ձևավորման համար. լինել պահանջված բոլոր շահակիցների շրջանում:

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՈԼԵՋԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական բժշկական քոլեջ» Պետական Ոչ Առևտրական Կազմակերպությունըհիմնադրվել է 07.03.1994թ. Հայաստանի ՀանրապետությանԱռողջապահության նախարարության նախարարիև Արարատի քաղխորհրդի գործկոմիորոշման համաձայն՝ որպես Երևան քաղաքի թիվ**2** բժշկական ուսումնարանիԱրարատ քաղաքի մասնաճյուղ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Օրթոպեդ–ստոմատոլոգիա» մասնագիտությունների ուսուցմամբ, որը հետագայում վերանվանվեց «Ատամնատեխնիկական գործ»:
13.08.1996թ. ՀՀ ԱՆ կոլեգիայի որոշմամբ քոլեջը ստանում է «Երևանի թիվ **1** բազային բժշկական ուսումնարան» Արարատի Դուստր Ձեռնարկության (Դ/Ձ) կարգավիճակ: Ներառվում է նաև «Դեղագործություն» մասնագիտության ուսուցումը:
12.08.2003թ. ի կատարումն ՀՀ կառավարության 10.07.2003թ. որոշման «Երևանի թիվ **1** բազային բժշկական ուսումնարան» պետական ձեռնարկության Արարատի բժշկական ուսումնարան Դ/Ձվերանվանվել է Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության «Արարատի բժշկական ուսումնարան»ՊՈԱԿ:
ՀՀ ԱՆ 06.03.2006թ. թիվ 232-Ա հրամանով «Արարատի բժշկական ուսումնարան»ՊՈԱԿ-ը վերանվանվել է ՀՀ ԱՆ «Արարատի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ:
02.09.2013թ. ՀՀ ԱՆենթակայության «Արարատի պետական բժշկական քոլեջ»ՊՈԱԿ-ը անցնում է Հայաստանի Հանրապետության Կրթության և Գիտության նախարարության ենթակայությանը:
2019թ. ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ վերաձևակերպվել է Հայաստանի հանրապետության կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության: Քոլեջը գտնվում է քաղաք Արարատ, Խանջյան 63 հասցեում:
04.10.2018թ. ՀՀ ԿառավարությանN**1094**-Ա որոշմամբ Արարատ քաղաքի թիվ N4-րդ հիմնական դպրոցի մեկ մասնաշենք 825մ² տարածքով տրամադրվել է Արարատի պետական բժշկական քոլեջին անժամկետ, անհատույց օգտագործման: 2020 թ. շենքը վերանորոգվել է պետական միջոցներով, հատկացվել է նաև 0.3067 հա տարածք: Քոլեջն ունի շուրջօրյա ջրամատակարարում, գազաֆիկացված է:
Քոլեջի գործունեության հիմնական առարկան միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է: Շրջանավարտների զգալի մասը աշխատանքի է անցել մեր մարզի առողջապահական հիննմարկներում՝ դրսևորելով իրենց որպես արհեստավարժ, բարձր մասնագիտական կարողություններով օժտված բուժաշխատողներ: Քոլեջը

մշտապես վերանայում է իր կրթական ծրագրերը և բովանդակությունը, կիրառում դասավանդման արդիական մեթոդներ:

Քոլեջն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի հանրապետության օրենքներով, իր կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով: Քոլեջի գործունեության հիմնական առարկան միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է, որը կազմակերպվում է հիմնական և միջնակարգ կրթության հիմքերով: Քոլեջը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, իր կանոնադրությամբ նախատեսված կարգով իրականացնում է՝

1. ՈՒսանողների և ունկնդիրների ընդունելություն, ապահովում է նրանց ուսումնական գործընթացի, ընթացիկ և պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումն ու անցկացումը:
2. Կարող է իրականացնելմեծահասակների կրթության և ուսուցման ծրագրեր:

3.Ապահովում է դասախոսների վերապատրաստումը, որոկավորման բարձրացումը:

4.Աջակցում է քոլեջի ուսանողական խորհրդի աշխատանքներին, ինչպես նաև քոլեջի ուսանողների մասնակցությանը քոլեջի կառավարմանը և քոլեջի կողմից իրականավցվող ծրագրերում:

5.Միջոցներ է ձեռնարկում քոլեջի ուսանողների ինքնազարգացման առողջության պահպանման բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման համար:

6.Իրականացնում է միջին մասնագիտական կրթության զարգացմանը նպաստող ծրագրեր:

Քոլեջի կառավարման մարմիններն են.

1. Հիմնադիրը
2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ Լիազորված մարմին):
3. Քոլեջի կոլեգիալ կառավարման մարմինը՝ քոլեջի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդը):
4. Քոլեջի գործադիր մարմինը՝ քոլեջի տնօրենը՝( այսուհետ՝ Տնօրենը):

Քոլեջում ձևավորվել են տարբեր խորհրդակցական մարմիններ՝ տնօրինական, ուսումնամեթոդական, մանկավարժական, ուսանողական, ուսումնադաստիարակչական, ինչպես նաև որակի ապահովման ներքին ենթակառույց, կարիերայի ուղղորդման պատասխանատու, որոնց համատեղ աշխատանքը նպատակաուղված է քոլեջի գործունեության բարելավմանը

Հաստատում եմ՝

# Արարատի պետական բժշկական քոլեջի կառուցվածքը

Տնօրեն Մ. Գ. Գրիգորյան

31. 08. 2023թ



# ՔՈԼԵՋԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

«Արարատի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ գործունեությունն ուղղված է միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստմանն ու աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը, կրթական ծրագրերի համապատասխանեցմանը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, մատչելիության ապահովմանը: Քոլեջի դերը մեծ է տարածաշրջանի առողջապահական ոլորտում, սոցիալ-տնտեսական զարգացման գործում:Քոլեջն իր գործունեության ընթացքում տվել է բազմաթիվ շրջանավարտ մասնագետներ, ովքեր համալրել են հանրապետության բուժական հաստատությունների աշխատողների մեծաքանակ կազմը: Քոլեջի գործունեությունը ուղղված է միջին մասնագիտական կրթության որակյալ մասնագետների պատրաստմանն ու աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը, ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության ապահովմանը: Տարածաշրջանի գրեթե բոլոր պետական և մասնավոր կլինիկաներում, լաբորատոր-ախտորոշիչ կենտրոններում , ատամնաբուժական կլինիկաներում, դեղատներում աշխատում են քոլեջի շրջանավարտները: Վառ օրինակ է «Արարատի հիվանդանոց բժշկական կենտրոն » ՓԲԸ –ում միջին մասնագիտական կրթությամբ աշխատող շուրջ 82 բուժաշխատողների թիվը: Քոլեջը համագործակցում է տարբեր գործատուների հետ, համատեղ իրականացնում քննարկումներ , հանդիպումներ, պարբերաբար նրանցից տեղեկանում աշխատաշուկայում առկա թափուր աշխատատեղերի մասին: Քոլեջը համագործակցում է նաև Միասնական սոցիալական ծառայության հետ, որն իրականացնում է բնակչության սոցիալական կարիքների առավել հասցեական և ամբողջական գնահատման, սոցիալական աշխատանքի բարելավման ու արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ: Համագործակցությունը հնարավորություն է տալիս վերլուծել մարզում առկա թափուր հաստիքները, գործատուների պահանջները: Քոլեջում ուսուցանվում են տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկին և սոցիալ-տնտեսական զարգացման միտումներին համապատասխանող մասնագիտություններ:Քոլեջում կրթությունը կազմակերպվում է հենվելով ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով, բավարարելով անձի մտավոր և հոգևոր պահանջները:

Քոլեջը ունի սոցիալական գործընկերների հետ համագործակցության լայն շրջանակ, համագործակցության պայմանագրերի համաձայն գործատուների հետ համատեղ իրականացվում են ուսումնական պարապմունքներ,

ուսումնաարտադրական պրակտիկաներ: Քոլեջը իր դերն ունի նաև մարզի երիտասարդության կրթության, դաստիարակության, մշակութային մակարդակի բարձրացման գործում:

Քոլեջում ուսուցանվում են հետևյալ մասնագիտությունները՝

1. « 0913.02.5 Քույրական գործ»
2. «0912.02 Մանկաբարձական գործ»
3. «0911.01.5 Ատամնատեխնիկական գործ»
4. «0916.01.5 Դեղագործություն» առկա/հեռակա
5. «0915.01.5  Բուժական կոսմետոլոգիա»

01.01.2023թթ.  քոլեջում սովորում է 288 ուսանող: Քոլեջի աշխատակիցների թիվը 2023թ-ի հունվարի 1-ի դրությամբ 45 է, մանկավարժներ՝ 33, որից 24-ը՝ հիմնական և 10-ը՝  համատեղությամբ, օժանդակ աշխատողները՝ 8:

Ընդունելությունը կատարվում է ՀՀԿԳՄՍՆ-ի կողմից հաստատված կանոնակարգով, 2009թ-ից կատարվում է ընդունելություն նաև  հիմնական կրթության հիմքով: Ընդունելությունը կատարվում է անվճար (պետպատվեր)  և վճարովի հիմունքներով:  Քոլեջում ուսումնառությունը կատարվում է միջազգային ստանդարտներին, մասնագիտական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով: Քոլեջում գործում   է 3 առարկայական հանձնաժողով՝«Հումանիտար   և սոցիալ- տնտեսագիտական առարկաների առարկայական հանձնաժողով»,«Ընդհանուր մասնագիտական և դեղագործական առարկաների առարկայական հանձնաժողով», «Հատուկ մասնագիտական առարկաների առարկայականհանձնաժողով», որոնց գործունեությունը նպատակաուղղված է ուսումնական գործընթացի ավելի մատչելի կազմակերպմանը: Քոլեջի կրթական, դաստիարակչական, վարչական գործառույթները իրականացվում են տարբեր խորհուրդների միջոցով՝կառավարման, տնօրինական, մանկավարժական, ուսումնամեթոդական , ուսանողական: Քոլեջում ուսումնական գործընթացը կազմակերպվում է մոդուլային ուսուցման համակարգի սկզբունքներով: Մասնագիտական առարկաների տեսական և գործնական գիտելիքների ուսուցումը իրականավում է ինչպես բարձրագույն բժշկական կրթությամբ մասնագետների, այնպես էլ բժշկական միջին մասնագիտական կրթություն ստացած մասնագետների կողմից:

Քոլեջի ուսումնական և արտադրական պրակտիկաները , գործնական պարապմունքների մի մասը անց են կանցվում «Արարատի հիվանդանոց բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում, «Սմայլ Դենտ» ՓԲԸ ատամնաբուժական կլինիկայում,

ներհիվանդանոցային և «Տաթևիկ Գրիգորյան» ԱՁ դեղատներում: Պրակտիկայի ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գիտելիքները, հմտությունները՝ ձեռք բերելով առաջավոր փորձ: Քոլեջում գործում է գրադարան, որըպարբերաբար համալրվում էգրականությամբ: Քոլեջում իրականացվում է գաղափարադաստիարակչական մեծ աշխատանք, կուրսղեկների կողմից պլանավորվում և իրականացվում է հասարակական, դաստիարակչական, մասսայական աշխատանքներ: Քոլեջում գործում է ուսանողական խորհուրդ, կարիերայի կենտրոն, կրթության որակի ապահովման կենտրոն:

# ՔՈԼԵՋԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

**Քոլեջի հիմնարար արժեքներն ու սկզբունքներն են՝**

1. Դասախոսների և ուսանողների համակողմանի զարգացում:
   Քոլեջը կարևորում է ոչ միայն մասնագիտական հմտությունների ձեռքբերումը, այլ նաև դաստիարակչական, ստեղծագործական աշխատանքների իրականացումն ու բազմակողմանի զարգացումը:
2. Օբյեկտիվություն և հետևողականություն
   Արդյունավետ կառավարումը ներառում է որոշումների կայացման օբյեկտիվ մոտեցումների կիրառում և հետևողականության պահպանում: Որոշումները կայացվումեն՝ապահովելով տեղեկատվության թափանցիկությունը, քանզի հաշվի է առնվում յուրաքանչյուր աշխատակցի և ուսանողի կարծիքը:
3. Ազնվություն և փոխադարձ հարգանք:
   Քոլեջը կարևորում է ազնվության և փոխադարձ հարգանքի վրա հիմնված միջավայրի առկայությունը՝ համարելով այն կարևոր գործոն իր առաքելությունն իրականացնելիս:
4. Հավասարություն և արդարություն
   Այն դրսևորվում է քոլեջի գործունեության տարբեր ոլորտներում՝ ապահովելով միջին մասնագիտական կրթություն ստանալու համար հավասար իրավունքներ՝ անկախ սեռից, տարիքից, ազգային պատկանելիությունից, ֆիզիկական հնարավորություններից և սոցիալական դիրքից:
5. Ակադեմիական ազատություն
   Ակադեմիական ազատությունը իրավունք է տալիս դասախոսական կազմին ուսումնական նյութերը ներկայացնել իրենց հայեցողությամբ, ստեղծել պայմաններ ուսանողների շարունակական և զուգահեռ կրթության կողմնորոշման, ինքնզարգացման, կատարելագործման, սեփական ռեսուրսների բացահայտման համար:
6. Հաշվետվողականություն
   Կառավարման մարմինների, շահառուների և գործընկերների վստահությունը վայելելու համար քոլեջը պետք է հաշվետու լինի նրանց առջև:
7. Կառուցողական աշխատանքային հարաբերություններ

Դրական և արդյունավետ աշխատանքային հարաբերությունների հիմնական բաղադրիչները փոխադարձ հարգանքն ու վստահությունն է: Քոլեջը խթանում է աշխատակիցների թիմային աշխատանքը, փոխադարձ աջակցությունը, բաց երկխոսությունը, տարբեր տեսակետների ճանաչումն ու գնահատումը:

8. Կրեատիվություն և նորարարություն

   Այս սկզբունքի որդեգրումը ցույց է տալիս, որ քոլեջը պատրաստ է արձագանքելու նոր մարտահրավերների, նոր մոտեցումների կրթության իրականացման գործընթացում:

9. Որակ

   Քոլեջը գործադրում է առավելագույն ջանքեր իր ռազմավարական նպատակներին հասնելու և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան միջին մասնագիտական բժշկական կրթությամբ որակյալ մասնագետներ ապահովելու համար:

10. Աշխատակիցների և ուսանողներրի արժեվորում

    Այս սկզբունքը արտահայտվում է նրանց նկատմամբ հոգատար վերաբերմունքի, խրախուսման և աջակցման քաղաքականությամբ:

# ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ

## (ՈՒԹՎՀվերլուծություն)

### ՔՈԼԵՋԻ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՎՏԱՆԳՆԵՐԸ

# SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| 1. ՔՈԵՋԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ | | | |
|---|---|---|---|
| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՎՏԱՆԳՆԵՐ |
| • Քոլեջը Արարատի մարզում միակ միջին մասնագիտական առողջապահական ուսումնական հաստատությունն է, որը կրթօջախ է հանդիսանում նաև տարածաշրջանի բնակիչների համար:<br>• Հիմնանորոգված առանձին մասնաշենք՝ ընդարձակ և լուսավոր լսարանների առկայություն<br>• Սեյսմակայունություն<br>• Ջեռուցման համակարգ<br>• ՈՒսուցումը որոշ մասնագիտությունների գծով կազմակերպվում է կաբինետային համակարգով | • Մարզադահլիճի բացակայություն | • Բացօթյա մարզահրապարակի կառուցում<br>• Բակի բարեկարգում, կանաչապատում<br>• Անվտանգության ապահովման նպատակով տեսասարքերի ձեռք բերում | • Ֆինանսական ոչբավարար ռեսուրսներ<br>• Արտակարգ իրավիճակներ |

## 2. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՎՏԱՆԳՆԵՐ |
|---|---|---|---|
| ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ<br>• Փորձառու և արհեստավարժ անձնակազմի առկայություն<br>• Համագործակցային և թիմային աշխատանքների իրականացում<br>• Կառավարման ժողովրդավարական ոճ<br>• Կադրային ճիշտ քաղաքականություն<br>• Աշխատանքի կառավարման համակարգվածություն, վերահսկողություն և հաշվետվողականություն<br>• Կրթության որակի ապահովման վերահսկողություն<br>• Համագործակցային և առողջ բարոյահոգեբանականմթնոլորտ<br>• Կառավարման և կառուցվածքային օղակների համագործակցային և թիմային աշխատանքների իրականացում | • Որոշ աշխատակիցների շրջանումէլեկտրոնային ռեսուսների կիրառման թույլ կարողություններ: | • Սոցիալական գործընկերներիներգրավում կրթության կազմակերպման գործընթացին<br>• Համագործակցող քոլեջների հետ կառավարման գործընթացի կատարելագործման հնարավորություն | • Քոլեջի կառավարման գործընթացում արտաքին շահակիցների կողմից նախաձեռնությունների պասիվություն |

| 3. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ | | | |
|---|---|---|---|
| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՎՏԱՆԳՆԵՐ |
| • Նեղ մասնագիտական որակավորում և աշխատանքային փորձ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի առկայություն<br>• Գործատու բժիշկ դասախոսների առկայություն<br>• ՈՒսանողակենտրոն մոտեցումներ<br>• Դասախոսական կազմում գիտական, ակադեմիական աստիճան ունեցող դախոսների առկայություն<br>• Ընդհանուր կոլեկտիվի համախմբվածություն<br>• Քոլեջի դասախոսների նորարարական ծրագրերով աշխատելու պատրաստակամություն և | • Պահուստային մասնագետների պակաս<br>• Որոշ թափուր հաստիքներում հիմնական աշխատողներո վ համալրելու խնդիր | • Երիտասարդ և փորձառու մասնագետների սերտ համագործակցություն, փորձի փոխանակում<br>• Գործատու դասավանդողների շրջանակի ընդլայնում<br>• ՀՀ և այլ երկրների ՄՈՒՀ-երի հետ փորձի փոխանակման նպատակով համագործակցություն<br>• Մասնագիտական վերապատրաստումների հնարավորություն | • Համատեղությամբ աշխատող բժիշկ-դասավանդողներ ի հոսունություն<br>• Արտագաղթ<br>• Ցածր աշխատավարձ<br>• Սոցիալական փաթեթի և բժշկական ապահովագրությ ան բացակայություն |

| | | | |
|---|---|---|---|
| վերապատրաստումներին ակտիվ մասնակցություն<br>• ՄՈՒՀ-ի կողմից դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովում և խրախուսում<br>• Ինքնազարգացման խթանման համակարգ բարելավում<br>• Երիտասարդ և փորձառու մասնագետների սերտ համագործակցություն, փորձի փոխանակում | | | |

| 4. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ | | | |
|---|---|---|---|
| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՎՏԱՆԳՆԵՐ |
| • Վերջին տարիներին ուսանողների համակազմի համալրումը ոչ միայն Արարատ համայնքի, այլև հարակից այլ համայնքների և մարզերի դիմորդներով:<br>• Միջին և բարձր առաջադիմություն<br>• Անհարգելի բացակայությունների | • ՈՒսանողների արտահոսք՝ պայմանավորված երկրի սոցիալ-տնտեսական խնդիրներով (պատերազմ, գործազրկություն, արտագաղթ)<br>• Կրթական ծրագրերի քննարկման | • ՈՒսանողական խորհրդի կազմում տարբեր հանձնախմբերի ձևավորում՝ սոցիալական, մշակութային լրատվկան և այլն<br>• Մասնագիտական և ոչ մասնագիտական ոլորտներում | • Որոշ մասնագիտություննե րով դիմորդների թվի նվազեցում<br>• Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների թվի մեծ քանակ<br>• Որոշ բնակավայրերից դեպի Արարատ |

| | | | |
|---|---|---|---|
| ցածր ցուցանիշ<br>• Իր մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների բարձր ցուցանիշ<br>• ՈՒսանողների կողմից ցուցաբերվող բարձր հասարակական ակտիվություն, մասնակցություն բազմաթիվ ներքոլեջային և արտաքոլեջային միջոցառումների<br>• Կարիերայի կենտրոնի պատասխանատուի և շրջանավարտների միջև ակտիվ համագործակցություն<br>• ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունների ցածր վարձավճար | գործընթացներում ուսանողների ներգրավվածության պասիվություն | իրականացվող արտաքոլեջային սեմինարներին, քննարկումներին,դաս ախոսություններինուս անողների շարունակական մասնակցություն<br>• Բազմաշնորհ ուսանողների բացահայտում<br>• Ուսման մեջ ետ մնացող և հասարակական աշխատանքներում պասիվություն դրսևորած ուսանողների ներգրավվածություն տարբեր նախագծերում<br>• Քոլեջի կառավարման գործընթացներում ուսանողների ներգրավվածութան շարունակական բարելավման նոր մեխանիզմներ | քաղաք տրանսպորտային միջոցների ոչ համակարգված աշխատանքի հետևանքով դիմորդների թվի նվազում |

## 5. ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՎՏԱՆԳՆԵՐ |
|---|---|---|---|
| • Հմուտ և որակյալ կադրեր<br>• Վերապատրաստված մասնագետներ<br>• Համակարգչային լսարանի առկայություն՝ համալրված ժամանակակից համակարգիչներով<br>• Նոր գույքով համալրված դասասենյակներ<br>• ՈՒսումնալաբորատոր բազայի առկայություն՝ նոր, օգտագործված բայց պիտանի (մուլյաժներ, պաստառներ)<br>• ՈՒսումնական հաստատության և գործատուների միջև համագործակցություն<br>• Քոլեջում ուսուցանվող բոլոր մասնագիտություններով հագեցած, կարողություններին միտված պրակտիկաների անցկացում<br>• ՈՒսումադաստիարակչական գործընթացի համակարգված, պարտաճանաչ իրականացում<br>• ՈՒսանողների բարոյական և ռազմահայրենասիրական դաստիարակություն | • Մարզադահլիճի բացակայություն | • Քոլեջի արտաբյուջեի ավելացման շնորհիվ ժամանակակից նյութատեխնիկական բազայի ավելացում, համալրում<br>• Պրակտիկաների բազաների ընդլայնում<br>• Նոր սոցիալական գործընկերների հետ կրթություն կազմակերպելու և համագործակցելու հնարավորություն | • Ոչ բավար ար ֆինանս ավորում |

| 6.ՔՈԼԵՋԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | | | |
|---|---|---|---|
| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՎՏԱՆԳՆԵՐ |
| • Պետական բյեւջեից ստացվող ֆինանսական միջոցների ժամանակին տրամադրում<br>• Քոլեջի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործում<br>• Աշխատավարձի և կոմունալ ծախսերի ժամանակին վճարում<br>• Ըստ օրենսդրական պահանջների Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում<br>• Նոր գույքի, լաբորատոր սարքավորումների, քոլեջին անհրաժեշտ ժամանակակից նյութատեխնիկական | • Պետական բյուջեից քոլեջի զարգացմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորման անբավարար ծավալ<br>• Մարզի, համայնքի բարերարների կողմից ներդրվող ֆինանսական միջոցների բացակայություն<br>• Ձեռնարկատիրական գործունեության բացակայություն | • Վճարովի համակարգի ուսանողների թվակազմի աճի շնորհիվ ֆինաասական կայունություն<br>• Սոցիալական գործընկերների հետ համագործակցության շարունակականություն<br>• Աշխատակազմիխրախ ուսման մեխանիզմների բարելավում<br>• Միջազգային և բարեգործական կազմակերպություններ ի հետ համագործակցության ձեռքբերում<br>• Տարատեսակ ծրագրերին մասնակցելու | • Ֆինանսական անկայուն վիճակ<br>• Արտաբյուջեի ոչ բավարար ծավալ<br>• ՈՒսանողների անկանխատեսելի արտահոսքի և անբավարար ընդունելության պատճառով ֆինանսական միջոցների նվազում<br>• ՈՒսանողների ծնողների անվճարունակութ յուն<br>• Անկայուն քաղաքական և տնտեսական իրավիճակ |

| | | | |
|---|---|---|---|
| բազայի համալրում<br>• Վճարովի հիմունքով սովորող ուսանողների վարձավճարներից գոյացած արտաբյուջեի առկայություն | | հնարավորություն<br>• Նոր կարճաժամկետ ծրագրերի իրականացում | • Բնակչության եկամուտների ցածր մակարդակ՝ վճարովի համակարգում սովորող ուսանողների թվի նվազում<br>• Անկանխատեսելի ծախսեր |

## ՔՈԼԵՋԻ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ , ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Քոլեջի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ խթանելով ստեղծագործական աշխատանքը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության գիտելիքների ձեռքբերման կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացումը:

### Քոլեջի հիմնախնդիրներն են.

1. Կրթության որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործում, ինստիտուցիոնալ բարեփոխում
2. Դասախոսական կազմի համլրում երիտասարդ որակյալ մասնագետներով
3. Ուսումնական գործընթացի թափանցիկության և հրապարակայնության շարունակական ապահովում
4. Հետազոտական գործունեության առաջնահերթություն
5. Աշխատանքային միջավայրի արդիականացում
6. Քոլեջի տեղեկատվական բազայի զարգացում
7. Քոլեջի ֆինանսական գործունեության բարելավում
8. Քոլեջի համագործակցության շրջանակների ընդլայնում, միջազգայնացում, միջազգայնացմանն ուղղված գործընթացների իրականացում
9. Քոլեջի կարգավիճակի շարունակական բարձրացում, հասարակական տարածում

Քոլեջի զարգացման նպատակն է ապահովել աշխատաշուկան բարձրակարգ մասնագետներով, պահպանել կրթական բարձր չափանիշներ, և հնարովորություն տալ սովորողներին լիարժեք կերպով իրացնելու իրենց ներուժը՝ տրամադրելով ժամանակակից պահանջներին բավարարող ճկուն ուսումնական ծրագրեր, որոնք պետք է համապատասխանեն քոլեջի առաքելությանը, պետական կրթական չափորոշինչներին: Որակի ապահովան արդյունավետ գործողություններով քոլեջը միտված է ձեռք բերել և պահպանել ուսանողների ու այլ շահակիցների վստահությունը:

1.Քոլեջի հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է իրականացնել կրթական ծրագրերի բովանդակային վերափոխումներ տարբեր մասնագիտությունների մասնագիտական պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, որի համար անհրաժեշտ է վերանայել համապատասխան կրթական պլանները և ծրագրերը՝ հաշվի առնելով մասնագետների պատրաստման առանձնահատկությունները, ինչպես նաև գործատու կազմակերպությունների արդի պահանջները:

2.Կատարելագերծել կրթության ներքին որակի համակարգը՝ ստեղծելով նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների բարելավման նպատակով:

3. Համալրել մանկավարժադասախոսական կազմը անհրաժեշտ մասնագետներով՝ ապահոլելով շարունակական վերապատրաստումներն ու կրթական բարեփոխումները

4. Ստեղծել տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային մատչելի միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատակիցների արդյունավետ գործունեությունը խթանելու նպատակով, համալրել ուսումնամեթոդական, նյութատեխնիկական բազան արդի պահանջներին համապատասխան:

5. ժամանակից չափանիշներին համապատասխան վերափոխել և զարգացնել քոլեջի տեղեկատվական բազան՝ ապահովելով տեղեկատվական ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու մատչելիությունը:

6. Պահպանել նախկինում ձեռք բերված համագործակցային համաձայնությունները և ընդլայնել գործընկերների շրջանակը:

7. Դառնալ նախաձեռնող քոլեջի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնման հարցում, այդ նպատակով իրականացել կարճաժամկետ կրթական ծրագրեր, ձեռնարկատիրական գործունեություններ և այլն:

8. Իրագործել միջազգայնացմանն ուղղված իրատեսական քայլեր:

# Ռազմավարական առաքելության և նպատակների իրականացում
# 2023-2028 թթ.ռազմավարության ապահովում

## 1. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ և ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Ոլորտը.Կառավարման համակարգ և կադրային քաղաքականություն**

## Նպատակներ

- Կառավարման ինստիտուցիոնալ համակարգ՝ թափանցիկ հաշվետվողականության ապահովմամբ
- Հստակեցված կադրային քաղաքականություն
- Բարելավված աշխատանքային փաստաթղթեր
- Աշխատակիցների կատարելագործված կարողություններ
- Վարչական, դասախոսական, ուսումնաօժանդակ, սպասարկող կազմի որակյալ, փորձառու կադրերով շարունակական համալրում
- Աշխատակազմի տարիքային բազմաշերտություն՝ ծերացումը կասեցնելու և աշխատանքային փորձառության փոխանցելիությունը ապահովելու նպատակով
- ՊԻԳԲ (պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում) շրջափուլի շարունակական կիրառում՝ վարչական, դասախոսական, ուսումնաօժանդակ, սպասարկող ստորաբաժանումների գործունեության արդյունավետ կառավարումն ապահովելու նպատակով

## Խնդիրներ

- Շարունակական կատարելագործել քոլեջի կառավարման համակարգը, պարբերաբար գնահատել և բարձրացնել կառավարման արդյունավետությունն ու որակը:
- Ապահովել քոլեջի խորհուրդների միջև (կառավարման, մանկավարժական, ուսանողական և այլն) կառուցողական համագործակցության զարգացմանը նպաստող միջավայր

- Ապահովել քոլեջում հիերարխիկ սխեմայով հորիզոնական և ուղղահայաց կապերի աշխատանքների համաձայնեցվածությունը
- Նպաստել քոլեջի վարչական, դասախոսական, ուսումնաօժանդակ, սպասարկող ստորաբաժանումների աշխատակիցների կարողությունների զարգացմանը
- Ստեղծել նախադրյալներ երիտասարդ որակյալ կադրերի շարունակական համալրման համար

## Միջոցառումներ, գործողություններ

- Ապահովել կառավարման տարբեր մարմիններում ուսանողների ներգրավվածությունը
- Ապահովել վարչական, դասախոսական, ուսումնաօժանդակ բաժինների աշխատակիցների ակտիվ մասնակցությունը մասնագիտական պարտադիր վերապատրաստումներին և աջակցելել մասնագիտական կամավոր ատեստավորմանը մասնակցելուն
- Ներդնել դասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական համակազմերի աշխատանքների արդյունավետության գնահատման նոր համակարգ
- Գործարկել ուսումնական ստորաբաժանումների գործունեության պլանավորման բարելավման մեխանիզմներ, պլանավորման և հաշվետվության ընդհանուր մոտեցումներ
- Բարձրացնել աշխատողների և ուսանողների իրազեկվածության մակարդակը քոլեջային գործընթացներիվերաբերյալ, մեծացնել հրապարակայնությունն ու թափանցիկությունը քոլեջի կառավարման համակարգում
- Ապահովել աշխատակիցների շրջանում իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության մարկարդակի բարձրացումը, քոլեջի աշխատանքային փաստաթղթերին ծանոթացումը
- Բարձրացնել վարչակազմի, դասախոսների, ուսումնաօժանդակ և սպասարկող աշխատողների հաստիքներին ներկայացվող որակական պահանջները
- Քոլեջում խրախուսման, պարգևատրման և պատժամիջոցների կարգերի մշակում և ներդրում

## Ժամանակացույց

Ժամանակացույցը ներկայացված է ժամանակացույցում՝ էջ 37-38

## 2. ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

**Ոլորտը. Շենքային պայմաններ ,նյութատեխնիկական բազա**

# Նպատակ

1. Արդիականացված նյութատեխնիկական բազա, տեխնիկապես վերազինված լաբորատոր լսարաններ
2. Ուսուցման համար անհրաժեշտ բարելավված պայմաններ
3. Ֆունկցիոնալ մարզահրապարակ
4. Քոլեջի բարեկարգված, կանաչապատված բակ

# Խնդիրներ

- Բարելավել և հարստացնել ուսումնական միջավայրը՝ կրթական ժամանակակից պայմաններին համապատասխան
- Շարունակական համալրել քոլեջի նյութատեխնիկական բազան նոր ժամանակակից սարքավորումներով
- Ստեղծել քոլեջի տարածքում գտնվող մարզահրապարակ
- Իրականացնել քոլեջի բակի շարունակական բարեկարգում և կանաչապատում

# Միջոցառումներ, գործողություններ

- Հաշվի առնելով քոլեջի բյուջեն՝ պարբերաբար վերազինել նյութատեխնիկական բազան
- Կազմակերպել և իրականացնել քոլեջի բակի կանաչապատման աշխատանքներ
- Ստեղծել ուսանողների համար հանգստյան գոտի
- Ձեռքբերել մարզահրապարակի համար անհրաժեշտ գույք
- Ձեռք բերել որակյալ կրթական գործընթաց ապահովող գույք
- Ապահովել ներքոլեջային պրակտիկա իրականացնելու համար համապատասխան նյութատեխնիկական բազա

## Ժամանակացույց

Ժամանակացույցը ներկայացված է ժամանակացույցում՝ էջ 38-39

## 3. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

**Ոլորտը. Քոլեջի ֆինանսատնտեսական գործունեությունը**

## Նպատակ

1. Քոլեջի բարելավված,կայուն ֆինանսական վիճակ
2. Հավելյալ ֆինանսական հոսքեր՝ պետական, ոչ պետական աղբյուրներից(օր.՝ բարեգործություն, )
3. Ֆինանասկական ռեսուրսների կառավարման մշակված, արդյունավետ քաղաքականություն

## Խնդիրներ

- Բարձրացնել ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը
- Բարելավել քոլեջի ֆինանսական միջոցների պլանավորման և բաշխման գործընթացները
- Ապահովել քոլեջի լավարկման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հոսք
- Ապահովել ֆինանսական հիմնականհոսքերից զատ կայուն այլ հոսքեր

## Միջոցառումներ, գործողություններ

- Իրականացնել քոլեջի PR ծրագրեր, իրազեկման ծրագրեր՝ուսանողների թվի աճ ապահովելու նպատակով
- Իրականացնելնոր կարճաժամկետ կրթական ծրագրեր՝ ֆինանսական այլընտրանքային հոսք ապահովելու համար
- Ապահովել համապատասխան միջավայր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով
- Մշակել և ներդնել ֆինանսական միջոցների մուտքերի և ելքերի շարունակական պլանավորման օրինակելի տարբերակ

- Վերանայել ուսման վարձավճարների չափերը
- Ապահովել ֆինանսական կառավարման, պլանավորման, մուտքերի և ելքերի տեսանելիթափանցիկություն

## Ժամանակացույց

Ժամանակացույցը ներկայացված է ժամանակացույցում՝ էջ 39-40

## 4. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ՀԱՄԱԿԱԶՄ

**Ոլորտը. Դասախոսակամ և ուսումնաօժանդակ համակազմ**

## Նպատակ

1. Հմուտ, փորձառու, իրազեկված դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմ
2. Կրթական համապատասխանեցմամբ կադրեր, հաստիքային աշխատակիցներ
3. Փաստաթղթավորված մասնագիտական, աշխատանքային պարտականություններ, համագործակցային կապեր
4. Ազատ, անկաշկանդ միջավայր՝ ստեղծագործ, հետազոտական, մասնագիտական գործունեությունների համար
5. Բարելավված ՊԻԳԲ (Պլանավորում, իրականացում,գնահատում, բարելավում) շրջափուլ՝ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի գործունեության արդյունավետությունը ապահովելու համար

## Խնդիրներ

- Համալրել դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը ՝ որակյալ, փորձառու, երիտասարդ մասնագետներով
- Ունենալ պահուստային մասնագետների, դասախոսական կազմի բազա
- Բարելավել, կարգավորել ներքին համատեղությամբ աշխատող դասախոսների ծանրաբեռնվածությունը
- Ապահովել դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ
- Նպաստել դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի ինքնազարգացմանն ուղղված քայլերին (վեբինարներ, սեմինարներ, վերապատրաստումներ)

- Ներդնել և կիրառել առաջավոր փորձով դասախոսների, ուսումնաօժանդակ համակազմի մասնագետների խրախուսման մեխանիզմներ

## Միջոցառումներ, գործողություններ.

- Տրամադրել սկսնակ դասախոսներին ադապտատիվ, մեթոդական աջակցություն
- Նպաստել դասախոսական, ուսումնաօժանդակ կազմի շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցությանը
- Պլանավորել և իրականացնել դասախոսական, ուսումնաօժանդակ կազմի համակողմանի զարգացմանը նպաստող դասընթացներ (օտար լեզուների իմացություն, ՏՀՏ, ժամանակակից մեթոդաբանություն), քննարկումներ և վերլուծական հանդիպումներ՝ վերապատրաստումներից ստացած նոր ինֆորմացիայի փոխանցման նպատակով
- Ծանոթացնել դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի անդամներին իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ փաստաթղթերին իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով
- Ապահովել քոլեջի խորհուրդներում (ՄԽ, ԿԽ) դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի աշխատակիցների կարծիքային հասանելիությունը և կառավարման գործընթացում մասնակցությունը

## Ժամանակացույց

Ժամանակացույցը ներկայացված է ժամանակացույցում՝ էջ40-42

## 5. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

**Ոլորտը. Ուսանողական համակազմ**

## Նպատակ

1. Դիմորդների հավաքագրման բարելավված մեխանիզմներ
2. Ուսումնառողների ընտրության և ընդունելության գործընթացների կատարելագործված ընթացակարգեր
3. Աշխատաշուկային համապատասխան մրցունակ շրջանավարտներ

## Խնդիրներ

- Ապահովել դպրոց-քոլեջ-աշխատաշուկա արդյունավետ կապը
- Ապահովել ուսանողների քանակական աճ
- Որակապես բարելավել քոլեջի մարքեթինգային մոտեցումները և զանազանեցնել քոլեջի մասին տեղեկատվության տարածման միջոցները
- Բարելավել ընդունելության գործընթացի կազմակերպման համակարգը
- Շարունակական ապահովել քոլեջի տարբեր ոլորտներում, կառավարման գործընթացում ուսանողների ակտիվ մասնակցությունը
- Կրթել իրավագիտակից, բազմակողմանի զարգացած, մասնագիտական կարողություններով հարուստ քաղաքացի
- Խթանել ներքոլեջային ուսանողական կազմավորումների (օրինակ՝ Ուսանողական խորհուրդ) ակտիվ գործունեությունը
- Խրախուսել ուսանողների արտալսարանային հոգևոր, մշակութային, սոցիալական բնույթի միջոցառումների կազմակերպմանը և իրականացմանը

## Միջոցառումներ, գործողություններ.

- Իրականացնել մարքեթինգային իրազեկող բնույթի այցեր տարածաշրջանի հանրակրթական հաստատություններ
- Տրամադրել խորհրդատվություն քոլեջի դիմորդներին և քոլեջում ուսումնառողներին՝ մասնագիտական կողմնորոշման, կարիերայի պլանավորման վերաբերյալ
- Իրականացնել բաց դռների օրեր
